ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2024 թվականի N 0550-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 17,18 գ և 13-րդ կետերի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> հ. 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով 2015 թվականի մարտի 19-ի հ.596-Ն որոշման N-1 հավելվածի 49-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, և ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Մելիք Հայկազի Ղասաբյանի 29.01.2024 թվականի թիվ 0565 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սեփականության իրավունքով Մարիամ Հայկազի Ղասաբյանին,Մելիք Հայկազի Ղասաբյանին և Մուրադ Հայկազի Ղասաբյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփ. վկայական 2518053/ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղում գտնվող 04-076-0033-0001 կադաստրային ծածկագրով 0,296 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 183,3 քմ ներքին և 216,2 քմ արտաքին մակերեսով ճանաչել օրինական,իսկ 24,8 քմ մակերեսով ծածկոցը համարել ինքնակամ:

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված ընդհանուր արտաքին 212,2 քմ մակերեսով ինքնակամ բնակելի տան օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1028 ՀՀ դրամ ընդհանուր՝ 218141/ մեկ հարյուր ութսունութ հազար ինները հարյուր հիսունիններ/ ՀՀ դրամ:

4.Մարիամ Հայկազի Ղասաբյանին,Մելիք Հայկազի Ղասաբյանին և Մուրադ Հայկազի Ղասաբյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղում գտնվող / 2518053 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական/ գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Նորավան, 3-րդ փողոց 19:

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Նորավան, 3-րդ փողոց 19 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023REZVY8:

6.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024 թ. հունիսի 22
ք. Արմավիր